«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Տարրական դասարաններում մայրենիի նյութերի ուսուցումը արվեստի նմուշների միջոցով
ԱՌԱՐԿԱ	դասավար
ՀԵՂԻՆԱԿ	Մարինե Օչինյան
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Հրազդանի N2 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ----------3

Տարրական դասարաններում մայրենիի

նյութերի ուսուցումը արվեստի նմուշների միջոցով----------4

Տարրական դասարաններում մայրենիի նյութերի ուսուցումը

կինոնկարների դիտման և թատերական ներկայացումների միջոցով ---------- 6

Տարրական դասարաններում մայրենիի նյութերի ուսուցումը

կերպարվեստի,երգ-երաժշտության,քանդակագործության միջոցով ----------10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ---------- 14

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ----------19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարի ուսուցման գործընթացը ենթադրում է աշակերտ-ուսուցիչ փոխադարձ կապ, այսինքն՝ ուսուցիչը սովորեցնողի դերում չէ, իսկ աշակերտը՝ սովորողի. այժմ կարծիքներ փոխանակելու, աշակերտի տեսակետը լսելու, հետազոտություններ կատարելու,վերլուծելու և մեկնաբանելու ուղիով է ընթանում մեր ուսումնական գործընթացը:

Աշակերտների մոտ հեղինակություն, սեր ու հարգանք ունեն այն ուսուցիչները, ովքեր կարողանում են դասաժամը հետաքրքիր, արդյունավետ օգտագործել, աշակերտներին այնպիսի գիտելիքներ հաղորդել, որոնք ոչ միայն տեսական են, այլև կիրառելի գործնականում: Հետազոտական աշխատանքիս **նպատակն է** ընթերցողի մոտ ձևավորել վեհ գաղափարներ, հայացքներ, տեսակետներ ու համոզմունքներ:Աշակերտի մոտ զարգացնել գեղարվեստական ճաշակ ու գեղեցիկի ճիշտ ընկալում, դաստիարակել թե՛ բարոյապես, թե՛ գեղագիտորեն զարգացած անձ:

Տարրական դասարաններում ուսուցման նպատակը ոչ միայն հիմնական գիտելիքների ձևավորումն է, այլև կարողունակությունների ձևավորում, որոնք հնարավորություն կտան նրան ինքնուրույն մտածելու, հետազոտելու, քննարկելու, օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից: Հետևաբար՝ ուսումնառության հաջորդ օղակում աշակերտի ուսումն ավելի դյուրին ու հետաքրքիր կլինի: Հետազոտական աշխատանքիս **խնդիրներն** են տարրական օղակում բացահայտել աշակերտների ուսումնական ,գործունեության ընդհանուր կարողությունների ու հմտությունները: Այստեղ ուսուցչի գերխնդիրն է աշակերտին սովորեցնել սովորել : Իսկ դա նշանակում է, որ աշակերտը պետք է տիրապետի ոչ միայն տարրական ուսումնական գործունեության որոշակի կարողությունների ու հմտությունների (կարդալ,խոսել,գրել…), այլև մտածական գործառությունների (հետազոտություն,վերլուծություն, ընդհանրացում, կիրառում…):

Արդյունքում սովորողների ձեռք բերած գիտելիքների, կարողունակությունների հիման վրա ուսուցիչը կձևավորի աշակերտի գիտական աշխարհայացքը, կդաստիարակի և կսերմանի հայրենասիրական, հումանիստական զգացումներ, բարոյական որակներ, գեղագիտական ճաշակ: Դասի զարգացնող պահանջներն իրականացնելու համար ուսուցիչը կձևավորի նաև սովորողների ճանաչողական հետաքրքրությունները և այդ նպատակի համար կկիրառի գիտելիքները խթանող, մոտիվացնող, արթնացնող մեթոդներ ու հնարներ, ստեղծելով առողջ փոխհարաբերություններ իր և իր սաների միջև:

Ընթերցանությունը աշակերտի մտավոր, ճանաչողական և խոսքային գործունեության աղբյուր է։ Ուստի ուսուցչի օգնությամբ աշակերտի մոտ պետք է հետաքրքրություն առաջանա գիտելիքների հիմնական աղբյուր հանդիսացող գրքի նկատմամբ, ուսուցիչը պետք է նպաստի աշակերտների հուզական, գեղագիտական զարգացմանը։ Այս պահանջով էլ հարկավոր է առաջնորդվել և կատարելագործել բնագրի վրա կատարվող աշխատանքների մեթոդներն ու հնարները։

Տարրական դասարաններում մայրենիի նյութերի ուսուցումը արվեստի նմուշների միջոցով

Յուրաքանչյուր դասի կազմակերպումն ու անցկացումը մի ստեղծագործություն է, որը կա՛մ սիրով կընթերցվի, կա՛մ կմնա գրասեղանին դրված։ Ուսուցիչը իր աշխատանքային ողջ գործընթացի ժամանակ պետք է կատարելագործվի, վերապատրաստվի և հասնի մանկավարժական վարպետության։ Նա երբեք չպետք է բավարարվի արդեն ունեցած գիտելիքներով։ Ինչպես աշակերտը, այնպես էլ ուսուցիչը պետք է մշտապես սովորի։ Սակայն միայն գիտելիքները չեն կարող ապահովել դասի հաջողվածությունը։ Մեծ նշանակություն ունի նաև դասի կազմակերպման ու անցկացման հերթականությունը։ Այն ենթադրում է դասաժամի յուրաքանչյուր վայրկյանի արդյունավետ օգտագործում, դասի բոլոր փուլերի տրամաբանական կապ, որոշակիություն, կրթական, դաստիարակչական, զարգացման խնդիրների իրագործում, ուսուցչի և աշակերտի գործունեության փոխկապակցվածություն, գիտակցական բարձր մակարդակ ու կարգապահություն։

ՏՀՏ անսահմանափակ տիրույթում ուսուցիչը կարող է գտնել այնպիսի նյութեր, որոնք կարող է համադրվել տվյալ դասի թեմայի հետ և միաժամանակ աշակերտին ցույց տալ, որ համացանցի անսահմանափակ հնարավորությունները կարելի է ավելի օգտակար դարձնել։

Նկարները, մուլտֆիլմերը ավելի պատկերավոր, կենդանի, տպավորիչ ու վառ են դարձնում ընթերցածը, խթանում մտածողության զարգացումը, հարստացնում երեխայի բառապաշարը, զարգացնում գեղագիտական ճաշակը։ Այն նաև հիմք է հանդիսանում գրական ստեղծագործությունը լիարժեք ու ամբողջական ընկալելու։ Ուսուցումն ավելի արդյունավետ է լինում, երբ հենվում է ոչ թե վերացական գաղափարների ու երևույթների վրա, այլ իրական առարկաների ու երևույթների։

Կոնստանտին Դմիտրևիչ Ուշինսկի՝ գիտական մանկավարժության հիմնադիր Ռուսաստանում գրում է. <<Հիշողության մեջ առաձնապես պահպանվում են այն պատկերները, որ մենք ընկալում ենք ինքներս անմիջական հասկացողության միջոցով, և որ մեր մեջ թափանցած այդպիսի

պատկերի հետ մենք հեշտությամբ ու հաստատապես կապակցում ենք նույնիսկ վերացական գաղափարներ, որոնք առանց դրա կմոռացվեն: Մանկական բնությունն ակնհայտորեն զննականության կարիք ունի>>[1]:

Աշակերտի գիտելիքներն առավել ամրապնդվում են հարց-պատասխանների, հետազոտությունների,վերլուծությունների միջոցով: Ուսուցիչը պետք է ստեղծի այնպիսի մթնոլորտ, որ աշակերտի ուղեղում ծագած հարցերը դասարանում բարձրաձայնվեն: Նույնիսկ պարզունակ, առաջին հայացքից հետաքրքիր չթվացող հարցերը չպետք է անպատասխան մնան: Այդ հարցերի պատասխանները ոչ միայն ուսուցիչը պետք է տա, այլև դրանց շուրջ պետք է մտածեն,քննարկեն,վերլուծեն մյուս աշակերտները:

Հարցադրումների թելադրանքով աշակերտները սկսում են կառուցել իմաստավորված գաղափարներ, կատարել եզրահանգումներ, ստեղծել նոր գաղափարներ: Դասանյութի շուրջ ձևավորված հարցերն աշակերտներին դրդում են մեկ անգամ ևս իմաստավորելու կարդացած ստեղծագործությունը, վերլուծելու դեպքերը և հերոսների գործողությունները: Աշակերտի համար ստեղծվում է ազատ ինքնարտահայտման հնարավորություն, նոր գիտելիքների և փորձի ողջ բազմազանության համադրում: Այդ կերպ զարգանում է անհատի ինքնուրույն մտածողությունը և առաջադրված խնդիրներին ստեղծագործական լուծումներ տալու հնարավորությունը:

Ապացուցված է, որ որքան շատ զգայարաններ են մասնակցում ուսուցման գործընթացին, այնքան արդյունավետ է ընթանում այն: Բնականաբար, եթե ուսուցումն արդյունավետ է, նշանակում է, որ հաստատուն են սովորողների ստացած գիտելիքներն ու կարողությունները:

Բազմաթիվ ուսուցիչներ ձգտում են ուսումնասիրվող նյութը երեխաների համար դարձնել հնարավորինս տեսանելի, շոշափելի ու զննելի: Այս խնդրի լուծման գործընթացում ծագում է միջառարկայական կապերի օգտագործման պահանջ:

Միջառարկայական կապերի կիրառումը տարրական դպրոցում ենթադրում է մայրենիի և նշված օղակում դասավանդվող մեկ այլ առարկայի ուսումնական նյութերին և նպատակների զուգորդում:

Տարրական դասարաններում մայրենիի նյութերի ուսուցումը կինոնկարների դիտման և թատերական ներկայացումների միջոցով

[1] Հայոց լեզու և գրականություն ,գիտամեթոդական ձեռնարկ ,Ե., 2011, էջ 21:
Մանկավարժական միտք, գիտամեթոդական ձեռնարկ , 3,2018,էջ203

Հայտնի է, որ մայրենիի ուսումնասիրման գործընթացը չի սահմանափակվում միայն դասաժամերին կատարված աշխատանքով: Այն շարունակվում է նաև դասից և դպրոցից դուրս: Օրինակ, աշխատանքը կարելի է շարունակել բնության մեջ՝ դիտուների ընթացքում, ներկայացումներ դիտելով տարբեր թանգարաններ, կամ մշակութային կենտրոններ այցելելով և այլն: Բնականաբար, ոչ միայն բծախնդրորեն պիտի ընտրվեն այն վայրերը, ուր պիտի իրենց դասն անցկացնեն աշակերտները ,այլև այն հնարներն ու մեթոդները, որոնց միջոցով պիտի կազմակերպվի ուսումնական պարապմունքը դասարանից, դպրոցից դուրս: Դիտարկենք, թե ինչպես կարելի է կազմակերպել մայրենիի ուսումնական պարապմունքները՝օգտագործելով թատրոնի և կինոյի հնարավորությունները:

Պետք է այնպիսի վայրեր ընտրել, որոնք ոչ միայն հետաքրքիր կլինեն աշակերտի համար, այլև՝ ուսուցողական: Այժմ այդպիսի հնարավորություն է տալիս թատրոն, կինոն այցելելը: Իհարկե ուսուցիչը պետք է ճշգրիտ մոտեցում ցուցաբերի, որովհետև թատրոնի, կինոյի ցանկացած նյութ չի կարող գրավել ու հետաքրքրել աշակերտին, ավելին՝ սխալ ընտրված նյութը կարող է ոչ միայն հիասթափություն առաջացնել,այլև թողնել սխալ մանկավարժական ազդեցություն: Օրինակ, մեկ ֆիլմ կամ թատերական ներկայացում դիտելուց հետո, աշակերտն այն կարծիքը չհայտնի, թե ինքը կինո կամ թատրոն հաճախել չի սիրում:

Սա նշանակում է, որ արտադասարանային ուսումնական պարապմունքները կազմակերպելուց առաջ ուսուցիչը պետք է ընտրի աշակերտներին ծանոթ, նրանց տարիքային առանձնահատկություններին համապատասխան թեմա ունեցող ֆիլմ կամ թատերական ներկայացում:

Ընթերցանության և թատերական ներկայացումները աշակերտներին հնարավորություն է տալիս առավել խորությամբ յուրացնել ուսումնական նյութը: Աշակերտը ներկայացուների դիտման ընթացքում տեղափոխվում են այն միջավայր, որտեղ տեղի են ունենում գործողությունները: Դրան նպաստում են բեմական զարդարանքները, հերոսների, հագուստները, իրերը: Օրինակ՝ հայ ազգային էպոսը՝ <<Սասնա ծռերը>> կամ Հովհաննես Թումանյանի <<Սասունցի Դավիթը>> կարդալուց հետո նպատակահարմար է դիտել համանուն թատերական ներկայացումը, որը բեմադրել է Դավիթ Հակոբյանը: Մենք կարևորում ենք ստեղծագործությունը կարդալուց հետո ներկայացման դիտումը, քանի որ հակառակ դեպքում կարդալը աշակերտին ձանձրույթ կպատճառի, նա արդեն գիտի դեպքերի ընթացքը:Ստեղծագարծությունը ընթերցելուց հետո աշակերտը կարողանում է «տեսանելի մարդկանց» միջոցով ավելի խորությամբ ըմբռնել գրական ստեղծագործության գաղափարը:

Դիտարկենք, թե ինչպես կարելի է կազմակերպել մայրենիի ուսումնական պարապմունքները՝ օգտագործելով կինոյի հնարավորությունները:

Օգտակար և միաժամանակ հետաքրքիր է ոչ միայն թատրոնը, այլև կինոն, որը «արվեստներից ամենամասսայականն է»: Կինոն արվեստի տեսակ է, որը ստեղծվում է կյանքի իրական փաստերի կամ գեղարվեստական կերպավորմամբ վերարտադրված գործողությունների կամ մուլտիպլիկացիայի միջոցներով արված պատմությունների նկարահանմամբ: Կինոն միավորում է տարածական և ժամանակային արվեստների (գրականություն, երաժշտություն, կերպարվեստ, թատերարվեստ) հնարավորությունները և միայն իրեն հատուկ արտահայտչամիջոցներով ներկայացնում է բովանդակություն, որը կրտսեր դպրոցականների համար առավել ընկալելի է :

Այսօրվա հնարավորությունները թույլ են տալիս, որ դասագրքերում տեղ գտած ստեղծագործությունները աշակերտին ներկայացվեն շարժախաղերի միջոցով: Սակայն տարրական դասարաններում, ելնելով կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկություններից, ավելի հոգեհարազատ է մուլտիպլիկացիոն կինոն: Այն ստեղծվում է նկարված կամ ծավալային օբյեկտների շարժման առանձին փուլերի նկարահանմամբ: Դրանք լինում են նկարչական և ծավալային:Որպես Հայաստանում առաջին մուլտիպլիկացիոն կինոնկարը՝<<Շունն ու կատուն>> որն ստեղծել է Լև Ատամանովը: Այդ կինոնկարը <<Շունն ու կատուն>> էր (նկ. 1, 2): Կարելի է դիտել, երբ անցնում ենք Թումանյանի համանուն բալլադը:

Նկ. 1



Նկ. 2

Կարծում ենք, որ մուլտիպլիկացիոն կինոնկարների դիտումը բավականին հետաքրքիր կլինի, քանի որ ստեղծագործությունը սիրված է բոլոր աշակերտների կողմից, և գրեթե բոլորն այն անգիր գիտեն:Մենք

մեր փորձով համոզվել ենք,որ երբ աշակերտը դիտում է ու արդեն գիտի, թե դեպքերին ինչպիսի ընթացք է լինելու, նա դառնում է ինքնավստահ, արժևորում է սեփական անձը գիտակցում, որ ինքն ունի որոշակի փեռքբերումներ: Դա խթանում է աշակերտի զարգացումը, աշակերտը ձգտում է հաջորդ դասի թեմաները նույնքան լավ յուրացնել, որպեսզի ևս մեկ անգամ ինքն իր ձեռքբերումների մեջ համոզվի:

Այժմ էլ էկրանավորվել ու էկրանավորվում են բազմաթիվ առակներ (այդ թվում՝ աստվածաշնչյան), հեքիաթներ, որոնք մենք հաճախ գործածում ենք մեր դասերի ընթացքում:

Մեր մանկավարժական փորձառությամբ համոզվել ենք, որ կինոնկարի ,մուլտֆիլմի և գրական տեքստերի ուսումնասիրության գործընթացների զուգակցումն աշակերտներին հնարավորություն է տալիս պատկերների միջոցով առավել գիտակցորեն ընկալել այն ամենը, ինչը միայն կարդացել են:

Մեր դասերի ընթացքում եկել ենք այն եզրակացության, որ աշակերտները որևէ ստեղծագործություն ընթերցելիս հիմնականում թռուցիկ են կարդում կամ ընդհանրապես չեն կարդում այն հատվածները, որտեղ երկարաշունչ նկարագրություններ են:Այնինչ երբեմն այդ նկարագրությունները կարող են ավելի խոսուն լինել, քան երկխոսությունները կամ ստեղծագործության մեկ այլ հատված:Ի տարբերություն դրա՝ կինոնկարը դիտելիս աշակերտները տեսնում է բնության երևույթները, զգում են դրանց կապը հերոսի հոգեվիճակի հետ, և ավելի խորությամբ ու տպավորիչ են դառնում ինչպես նկարագրությունները ,այնպես էլ յուրաքանչյուր մանրուք:

Թումանյանի <<Սասունցի Դավիթ>> էպոսային մշակումն ընթերցելուց հետո մենք աշակերտների հետ դիտեցինք ոչ միայն թատերական ներկայացումը, այլև մուլտիպլիկացիոն կինոնկարը, որը նկարահանվել է 2010 թ.-ին Արման Մանարյանի կողմից (նկ. 7, 8):

Նկ. 7



Նկ. 8

Մուլտֆիլմը դիտելուց հետո աշակերտներին էքսկուրսիա տարանք Սասունցի Դավթի արձանի մոտ: (նկ. 9):

Նկ. 9

Նկարիչ-քանդակագործ Երվանդ Քոչար <<Սասունցի Դավիթ>>-պղինձ (1959):

Աշակերտներն ուշադիր դիտեցին արձանը,պատմեցին քանդակի մասին իրենց ձեռք բերած տեղեկությունները:Նրանք այդ քանդակի միջոցով ավելի հստակ պատկերացրին հայ ժողովրդի կենսական ուժը, լավագույն ձգտումները, խոհերն ու զգացումները, որոնք մարմնավորված են էպոսի գլխավոր հերոսի՝ Դավթի կերպարի մեջ:Նրանք ամփոփեցին իրենց ձեռք բերած տպավորությունները և ձևակերպեցին,որ «Դավիթը գերմարդկային ուժ ունեցող անխոցելի հսկա է՝ հայրենասեր, ժողովրդասեր, ռամիկի ու աշխատավորների պաշտպան, նա անձնուրաց քաջ է, մարդասեր, խաղաղասեր»:Այսպիսով ընթերցելով, դիտելով, զննելով, քննարկելով, համեմատելով փորձում ենք հրարավորինս հետաքրքիր դարձնել մեր դասաժամերը: Այսպես, 1982 թ.-ին էկրան բարձրացած <<Գիքորը>> անհնար է նայել առանց հուզմունքի: Սոս Սարգսյանի, Գալյա Նովենցի, Արմեն Ջիգարխանյանի և այլոց մասնակցությամբ այս ֆիլմում նկատելի են այն բոլոր հատկանիշները, որոնք բնորոշ են հայ գյուղացուն (նկ. 10): Երբեմն այդ հատկանիշները այնքան էլ տպավորիչ չեն պատմվածքում (նկ. 11):

Նկ. 10

Նկ. 11

Տարրական դասարաններում մայրենիի նյութերի ուսուցումը կերպարվեստի,երգ-երաժշտության,քանդակագործության միջոցով

Այժմյան դպրոցը հնարավորություն է տալիս գրականության և արվեստի համադրումը կատարել դասաժամի ընթացքում: Երգ-երաժշտության,ազգային երգ-պար դասաժամի առկայությունը դպրոցում հնարավորություն է տալիս առարկայական կապ ստեղծել:

Ընթերցելով Թումանյանի <<Ամենալավ տունը>> բանաստեղծությունը՝ կարելի է լսե <<Ա՜խ, ինչ լավ են սարի>> վրա բանաստեղծության հիման վրա ստեղծված երգը:

Ապա կարելի է համագործակցել երգ-երաժշտության ուսուցչի հետ, որն աշակերտներին կսովորեցնի երգել այդ երգը, և կդիտեն տեսահոլովակը:

Պատահական չէ, որ Թումանյանի շատ բանաստեղծություններ վերածվել են երգի: Ըստ Թումանյանի. <<Բանաստեղծը միայն մարմին է տալիս իր մտքերին ու զգացմունքներին և իր ոգևորություններով կենդանության շունչ է շնչում նրան, որ նա ապրի մշտապես: Բայց որ նա թռչի, դրա համար նրան թևեր են հարկավոր: Իսկ թևեր առնել նա կարող է միայն էն կախարդական աշխարհքում, որ կոչվում է երաժշտություն>>[2]:

Երբեմն բանաստեղծություններն այնքան հոգեհարազատ են դառնում մարդկանց, որ նրանք երգում են՝ առանց իմանալու, թե ով է հեղինակը: Աշակերտներին առաջարկվում է ազատ արտահայտվել երաժշտությունից ստացած իրենց տպավորությունների մասին, քննարկել ընկերների հետ, ունենալ սեփական կարծիք, ինչու չէ նաև բանավիճել, քանի որ երաժշտությունը հույզերի լեզու է, ուստի յուրաքանչյուր երեխա այն ընկալում է յուրովի և խիստ անհատապես: Կարևոր է, որ ուսուցիչն իր սեփական կարծիքը չպարտադրի երեխաներին:

Երաժշտությունը մշտապես կարող է ինտեգրվել մայրենիի ցանկացած դասաժամի հետ՝ դասն առավել հագեցած, հետաքրքիր և արդյունավետ դարձնելու նպատակով: Այն նպաստում է աշակերտների բազմակողմանի և ներդաշնակ զարգացմանը:

Երաժշտական ճյուղի ամենաբարդ ու կարևոր ժանրերից է օպերան: Այստեղ համատեղվում են արվեստի գրեթե բոլոր ձևերը՝ երաժշտություն, պարարվեստ, գրականություն, թատրոն, կերպարվեստ, բեմական զգեստի արվեստ, լուսավորում և այլն: Իհարկե, կրտսեր դպրոցականների համար օպերան հետաքրքրություն չի առաջացնի, բայց ուսուցիչը պետք է աշակերտներին որոշակի տեղեկություններ տա արվեստի այդ տեսակի մասին:

---

[2] Ի. Սաֆրազբեկյան, Թումանյանի ընտանիքի կյանքի էջերից, Ե., 2009:

Թումանյանի ստեղծագործություններն ընթերցելիս պետք է աշակերտներին հայտնել, որ Թումանյանի գրչին է պատկանում նաև <<Անուշ>> պոեմը, որի համանուն օպերան գրել է Արմեն Տիգրանյանը, և այս օպերան բնորոշվել է իբրև առաջին ազգային օպերա (նկ. 12): Օպերայի մի հատված կարելի է լսել նաև՝ այցելելով Հովհ.Թումանյանի անվան թանգարան (նկ. 13):



Նկ. 12

Նկ. 13

Կարելի է աշակերտներին հայտնել, որ ավելի բարձր դասարաններում կընթերցեն <<Թմկաբերդի առումը>>, որի հիման վրա ստեղծվել է <<Ալմաստ>> օպերան: Նույնիսկ կարելի է սյուժեն պատմել, քանի որ կրտսեր դասարանի աշակերտների հիշողությունն ավելի ուժեղ է, իսկ իրենք՝ ավելի տպավորվող: Ուստի, ավելի բարձր դասարաններում, աշակերտները նյութն ընթերցելիս կհիշեն, որ այդ մասին ուսուցիչն իրենց պատմել է կրտսեր դասարանում: Եվ պետք է հիշեցնել, որ մշտապես հնչող <<Գործն է անմահ, լա՛վ իմացեք…>> արտահայտությունը հենց <<Թմկաբերդի առումը>> պոեմից է:

Կինոյից, թատրոնից զատ, բավականին մեծ տարածում ունի երաժշտական մյուզիքլ ժանրը, որը կարելի է համարել դեպի օպերա տանող առաջին աստիճանը, որը բավականին մեծ հետաքրքրություն է առաջացնում կրտսեր դպրոցականների մոտ: Այստեղ աշակերտներին ծանոթ հեքիաթները, պատմությունները զուգահեռվում են երգին ու պարին:

Ինչպես երգ-երաժշտության, այնպես էլ նկարչության ուսուցումը դպրոցում նպատակահարմար է: Նկարչությունն արվեստի այն ճյուղն է, որը գունային լուծումներով, վրձնահարվածներով ներկայացնում է որոշակի պատկերներ, որոնք օժտված են յուրահատուկ հոգեբանությամբ:

Նկարչությունը մեր արվեստի թերևս ամենազարգացած ճյուղն է, քանի որ ունեցել և այժմ էլ ունենք հիշատակության արժանի նկարիչներ, ինչպիսիք են Գրիգոր Խանջյանը, Մինաս Ավետիսյանը, Մարտիրոս Սարյանը, Հակոբ Կոջոյանը, Վարդգես Սուրենյանցը, Հովհաննես Այվազովսկին և այլք: Նրանք իրենց բնորոշ գունապնակից ընտրել են գույներ, կենդանացրել կյանքն ու մարդկանց:

Մուտքը հայ գրականություն սկսվում է գրերի գյուտով: Գրերի գյուտին ծանոթանալիս ուսուցիչն աշակերտներին կարող է ցուցադրել այս թեմայով նկարված բազմաթիվ նկարներ: Ստեփանոս Ներսիսյանի վրձնին է պատկանում Մաշտոցի մեծադիր նկարը, հայ անվանի նկարիչ Խանջյանին է պատկանում <<Հայոց այբուբեն>> ոստայնագորգի վարպետությունը: Խանջյանի վրձնին է պատկանում նաև Ավարայրի ճակատամարտը պատկերող կոթողային նկարը (նկ. 14):

Նկ.14

Այն գործվել է հատուկ ոստայնագորգի վրա՝ Վազգեն Ա կաթողիկոսի պատվերով՝ Ֆրանսիայի Լիոն քաղաքի մետաքսագործական ֆաբրիկայում: Այն այժմ ցուցադրվում է Էջմիածնի Վեհարանի դահլիճում: Պետք է աշակերտներին ցույց տալ, որ նկարում և՛ այդ ժամանակաշրջանի, և՛ դրանից առաջ ու հետո ապրած մարդիկ են պատկերված: Խանջյանն այս ձևով ցանկացել է ցույց տալ, որ հայ լեզուն ու ոգին, կրոնն անմեռ պահող ցանկացած մարդ Վարդան է, ու կապ չունի, թե որ դարում է ապրում:

Մայրենիի դասաժամին անհնար է խոսել հայկական բնաշխարհի մասին ու չանդրադառնալ Սարյանի կտավներին: Կարելի է աշակերտներին ցուցադրել Սարյանի նկարները և նրանց օգնությամբ այդ նկարներին համապատասխան բանաստեղծություններ վերհիշել (նկ. 15): Թումանյանի <<Ամենից լավ տունը>> ընթերցելիս այն կարելի է զուգահեռել Մինաս Ավետիսյանի <<Շեմի մոտ>> նկարի հետ (նկ.16):



Նկ.15

Նկ. 16

Մինաս Ավետիսյանը մեր նկարչության բարձրացող աշտարակն է՝ հեռուներից տեսանելի ու հեռուներ բացող: Այս նկարը կարող է զուգահեռվել նաև մորը նվիրված բանաստեղծություններին: Մինաս Ավետիսյանը հաճախ է պատկերել մորը՝ իրենց տան շեմին: Այս նկարի բովանդակությունը ծնվել է կենդանի տպավորություններից: Սովորելու տարիներին ամեն անգամ տուն գնալիս ու կրկին հեռանալիս մայրը, դռան առջև կանգնած, դիմավորել ու ճանապարհ է դրել որդուն: Նկարում տեսանելի է, թե մայրն ինչպես է իր փխրուն ուսերով պահում բոլոր դժվարություններն ու հոգսերը: Գորկին գրում է. <<Գրողը պետք է հասկանա, որ ինքը գրում է ոչ միայն գրչով, այլև նկարում է բառերով և նկարում է ոչ թե որպես նկարիչ, որ մարդուն պատկերում է անշարժ, այլ շարժման մեջ>>[3]:

Մորը վերաբերող բանաստեղծություններն ընթերցելիս պետք է աշակերտներին պատմել նաև նկարիչ Արշիլ Գորկու մասին, ցույց տալ նրա նկարները, պատմել, թե գրողի համար ինչ նշանակություն ուներ մոր գոգնոցը: Միաժամանակ կարելի է աշակերտներին հարցնել, թե իրենց համար մայրիկի ո՞ր իրն է նմանատիպ հիշողություններ ու հույզեր արթնացնում:

Ինչպես գրել է Դանիել Վարուժանը. <<Բառը գույն ունի, բառը համ ու հոտ ունի>>[4]:
Հայ ժողովուրդը ծնել ու ծնում է հանճարներ,ովքեր իրենց բառով, համ ու հոտով, վրձնի հարվածով,քանդակներով հիացնում ու հիացնելու են արվեստի սիրահարներին:

Աշակերտներին կարելի է հանձնարարել նաև ինքնուրույն նկարել այն պատկերները, որոնք տեսանելի են ստեղծագործությունն ընթերցելիս: Այս եղանակով զարգանում է աշակերտների գունային, պատկերավոր մտածողությունը:

Աշխատանքում արդեն նշել ենք, որ համապատասխան թեմաներն անցնելուն զուգահեռ կարելի է դիտել քանդակներ: Քանդակագործությունը կերպարվեստի ամենահին տեսակներից է, որի գործերն ունեն ծավալատարածական ձևեր, եռաչափ են ու շոշափելի:

Վերհիշել Պ.Սևակի <<Քիչ ենք,բայց հայ ենք>> բանաստեղծության մի պատառիկ՝ Պարզապես
գիտենք ժայռից վանք կերտել, Քարից շինել ձուկ, և
թռչուն՝ կավից, Ուսուցմա՛ն համար և
աշակերտե՛լ Գեղեցկի՛ն,
Բարո՛ւն, Վսեմի՛ն,
Լավի՛ն…

Քանդակագործությունը հիմնականում պատկերում է մարդկանց, կենդանիների, ավելի քիչ՝ բնության պատկերներ: Քանդակագործության միջոցով անմահ են մնում մեր գրական հերոսներն ու

[3] Բ. Յուզբաշյան, Գորկին և գրականության մի քանի հարցեր, Ե, 1968:
[4] Յու. Ավետիսյան, Արևմտահայ բանաստեղծների ստեղծագործական մշակումների Լեզվաոճական վերլուծություններ, Ե., 2012:

գրականության գոհարները ստեղծողները: Կրտսեր դասարանում՝ տառերը սովորելիս, նպատակահարմարը է, որ աշակերտները ծեփանով կամ ավազով փորձեն գործնականում ստանալ այդ տառերը: Սա կարելի է քանդակագործության սաղմնային վիճակը համարել: Իսկ արդեն բոլոր տառերը սովորելուց հետո կարելի է այցելել Մատենադարան, որի առջև գտնվում են Մեսրոպ Մաշտոցի և Կորյունի արձանները (նկ. 17), ԵՊՀ-ի պուրակ, որտեղ գտնվում են Մաշտոցի և Սահակ Պարթևի արձանները, Օշական (նկ. 18), Ապարան՝ քարե տառերի պուրակ (նկ. 19) և շատ ու շատ նմանատիպ վայրեր:

Նկ. 17

Նկ. 18



Նկ. 19

Գրեթե բոլոր գրողներն ունեն իրենց արձանները, որոնց միջոցով քանդակագործները փորձել են ինչ-որ չափով կենդանի պահել նրանց հիշատակը: Տեղին է հիշել Գաբրիել Սունդուկյանի ցանկությունը, ով գերադասում էր իր արձանի փոխարեն կանգնած լիներ իր սիրելի հերոսի՝ Պեպոյի արձանը: Ինչպես Թումանյանը գիտեր, որ իրենից հետո <<Շունն ու կատուն>> անմահ կդառնա, այնպես էլ Սունդուկյանը գիտեր, որ <<Պեպոն>> կդառնա բոլոր ժամանակների համար մնայուն ստեղծագործություն:

Էքսկուրսիաների ժամանակ կարելի է ծանոթանալ այդ գրողների քանդակներին: Քանդակագործության նմուշներին կարելի է ծանոթանալ նաև պատկերասրահներ ու թանգարաններ այցելելով, ինչպես նաև նկարներ դիտելով, որի ներքևի հատվածում տեղեկություն է տրվում քանդակի մասին:

Ուսուցման գործընթացում կարևոր է այցելությունը նաև թանգարաններ, պատկերասրահներ, տուն-թանգարաններ:

Տարիների փորձը ցույց է տալիս, որ աշակերտները մեծ հաճույքով են այցելում Հովհաննես Թումանյանի թանգարան: 1953 թ.-ի ապրիլին Երևանի Մոսկովյան 40 հասցեում ճարտարապետ Գրիգոր Աղաբաբյանի նախագծով բացվեց Հովհ.Թումանյանի թանգարանը: Թանգարանի ուշագրավ անկյուններից է նաև <<Լռվա ձորը>> համայնապատկերը, որի դիտումն ուղեկցվում է <<Անուշ>> օպերայի հնչյուններով: <<Անուշ>> օպերան, հայ ժողովրդական երաժշտական լեզվով գրված առաջին լիավարտ օպերան, որ ազգային օպերային գրականության մեջ ստեղծեց նոր ոճական ուղղություն: Երաժշտությունը և լիբրետոն Արմեն Տիգրանյանի (ըստ Հովհաննես Թումանյանի համանուն պոեմի):

Երևանի կենտրոնում գտնվող այս թանգարան հասնելու համար պետք է բարձրանալ 54 աստիճան, որը մեծ հայի ապրած տարիների խորհրդանշական թիվն է: Աշակերտները

հատկապես մեծ հետաքրքրությամբ են դիտում եռաչափ գրաֆիկայի (3D մոդելավորմամբ) միջոցով ստեղծված Թումանյանի քայլող սիլուետը և հեքիաթը:

Եռաչափ գրաֆիկայի ստեղծումը կարելի է համարել վերջին տարիների մեծագույն նվաճումներից մեկը: Այս մոդելավորման մասնակի կիրառմամբ է ստեղծվել նաև <<Անահիտ>> մուլտֆիլմը:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ մայրենին ամուր կապերով կապված է արվեստի բոլոր տեսակների հետ: Գրականության պատառիկները տեղ են գտել թե՛ կինոյի, թե՛ թատրոնի, թե՛ երաժշտության, թե՛ նկարչության և թե՛ քանդակագործության ոլորտներում: Ուսուցչի մանկավարժական հմտությունների ճիշտ կիրառման դեպքում աշակերտները կարող են ծանոթանալ ոչ միայն հայ, այլև օտար արվեստագետների ստեղծած լավագույն նմուշներին: Այս մեթոդի կիրառումը նպաստում է աշակերտների վերլուծական մտածողության, աշխարհայացքի, գեղագիտական ճաշակի զարգացմանը, հայրենասեր տեսակի ստեղծմաը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարի ուսուցչի խնդիրն է աշակերտին վերադարձնել դեպի գիրքը: Ուսուցիչն իր մասնագիտական հմտությունների շնորհիվ ավանդական մեթոդները զուգահեռում ՝ նորերի հետ՝ աշակերտների մեջ հետաքրքրություն առաջացնելով դեպի կրթությունը:

Աշխատանքիս նպատակն էր ցույց տալ, որ աշակերտներն ավելի բազմակողմանի և կայուն գիտելիքներ են ստանում միջառարկայական կապերի միջոցով, երբ ուսուցման գործընթացին մասնակցում են մեկից ավելի զգայարաններ : Ինչպես նաև մեր նպատակն էր բացահայտել ժամանակակից տեխնոլոգիաների առավելությունները և աշակերտներին սովորեցնել, թե դրանք ինչպես կարելի է կիրառել ուսուցման գործընթացն ավելի հետաքրքիր դարձնելու համար:

Իհարկե, ինչպես անցյալում, այնպես էլ այժմ կրտսեր դասարաններում անփոխարինելի է ուսուցչի դերը, սակայն այժմ ուսուցիչը միայն սովորեցնողի դերում չէ, իսկ աշակերտը՝ միայն սովորողի. և՛ ուսուցիչը, և՛ աշակերտը կարող են հանդես գալ թե՛ սովորողի, թե՛ սովորեցնողի դերում:

Աշխատանքը մեկ անգամ ևս փաստում է, որ արհեստավարժ ուսուցչի համար բազմաբնույթ մեթոդները,ՏՀՏ գործիքները ոչ միայն <<գլխացավանք>> չեն, այլև բավականին կարևոր են և նպաստում են ուսուցման գործընթացը ավելի արդյունավետ, հետաքրքիր դարձնելու: Ուսուցիչը դառնալով մեդիագրագետ աշակերտներին պետք է ուղղորդի, թե ինչպես կարելի է համացանցային ոստայնի մեջ գտնել իր համար պիտանին ու օգտակարը: Այս եղանակով՝ ուսուցիչը նպաստում է աշակերտների իմացական, գեղագիտական, հուզական աշխարհընկալման զարգացմանը: Դա տեղի է ունենում թե՛ դասաժամերի ընթացքում, թե՛ դպրոցից դուրս՝ էքսկուրսիաների ժամանակ:

1. Մայրենիի և թատրոնի կապը հնարավորություն է տալիս ավելի խորը յուրացնել նյութը: Կրտսեր դասարաններում հատկապես կարևորվում է Տիկնիկային թատրոնի դերը:
2. Կինոյի պահանջարկն այսօր ավելի մեծ է: Կրտսեր դասարանների աշակերտներին հետաքրքրում են ինչպես կինոֆիլմերը, այնպես էլ մուլտֆիլմերը: Ուրախությամբ պետք է նկատել, որ այսօր հայկական մուլտիպլիկացիոն կինոնկարի ստեղծումը բավականին բարձր մակարդակի վրա է: Այս ոլորտում ևս ավանդականը միահյուսված է նորին: Դրա վառ

ապացույցը նախորդ տարիներին նկարահանված <<Անահիտ>>, << Սասնա Ծռեր - Սասունցի Դավիթ >> մուլտֆիլմերն են՝ եռաչափ մոդելավորմամբ:

3. Միջառարկայական կապեր են ստեղծվում երգ-երաժշտության, նկարչության և տեխնոլոգիայի դասաժամերի ընթացքում:

   Աշակերտները կարող են ոչ միայն բանաստեղծությունների հիման վրա գրված երգերն ունկնդրել, այլև իրենք կատարեն այդ երգերը: Երաժշտական ճաշակի զարգացմանը նպաստում են նաև երաժշտական նախագծերը, օպերան, իսկ կրտսեր դպրոցականների համար այդ գործառույթը կատարում է երաժշտական մյուզիքլը:

4. Նկարչության հետ կապին նպաստում են մեր նշնավոր նկարիչների նկարները, որոնք կարելի է զուգահեռել այս կամ այն հեքիաթին կամ բանաստեղծությանը: Երբեմն նույնիսկ զուգահեռելու կարիք էլ չկա, քանի որ շատ հեքիաթներ, պատմվածքներ, նույնիսկ վեպեր ունեն իրենց համապատասխան նկարները: Նկարների դիտումը զարգացնում է աշակերտների գեղագիտական ճաշակը, և նրանք էլ կարող են նկարել այս կամ այն բանաստեղծությանը բնորոշ նկար:

5. Կրտսեր դասարաններում նպատակահարմար է նաև պատկերասրահներ, թանգարաններ՝ մասնավորապես տուն-թանգարաններ այցելելը: Տեխնոլոգիայի դասընթացի ժամանակ աշակերտները կարող են տարբեր նյութերով պատրաստել իրենց ծանոթ հեքիաթների հերոսներին, նույնիսկ՝ հեղինակներին: Ապա՝ հեղինակների իսկական քանդակները տեսնելուց հետո համեմատեն իրենց և նշանավոր քանդակագործների աշխատանքները:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ 21- րդ դարի աշակերտին կարելի է ուսուցման գործընթաց վերադարձնել նոր մեթոդների, տեխնիկական միջոցների և միջառարկայական կապի օգնությամբ: Դա նպաստում է աշակերտների գիտելիքների զարգացմանը, գեղագիտական ճաշակի հիմնավորմանը և գրքի նկատմամբ հետաքրքրության առաջացմանը: Դաստիարակում է աշխատասիրություն, անհատական և խմբային պատասխանատվություն, համագործակցություն, հանդուրժողականություն, համագործակցություն, ցանկացած իրավիճակում կողմնորոշվելու կարողություն, որոշումներ ընդունելու , անհրաժեշտության դեպքում ճկունորեն փոխելու և այլն: Այս մեթոդների միջոցով աշակերտը սկսում է սիրել գրականությունը, վերադառնում է դեպի գիրքը, իսկ գիրքը գտնում է իր կորցրած ընթերցողին, քանի որ **ինչպես մահացած ստեղծագործություններ չկան, այնպես էլ անտարբեր ընթերցողներ չպետք է լինեն:**

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավետիսյան Յու., Արևմտահայ բանաստեղծների ստեղծագործական մշակումների լեզվաոճական վերլուծություններ, Ե., 2012թ., 120 էջ:
2. Ալեքսանյան Լ., Կրտսեր դպրոցականի մտածողության զարգացումը ուսուցման արդի պայմաններում, Ե., 1987 թ., 147 էջ:
3. Դավոյան Դ., Կրտսեր դպրոցականների գեղարվեստական պատկերացումների ձևավորումը արվեստի համալիր ուսուցման գործընթացում, Ե., 2007 թ., 68 էջ:
4. Թումանյան Հովհ., Բանաստեղծություններ, քառյակներ, պոեմներ, լեգենդներ և բալլադներ, Ե., 1986 թ., 214 էջ:
5. Թումանյան Հովհ., Սասունցի Դավիթ, Ե., 2013 թ., 64 էջ:
6. Իսահակյան Ա., Բանաստեղծություններ, պոեմներ, լեգենդներ, Ե., 1985 թ., 519 էջ:
7. Հայոց լեզու և գրականություն, գիտամեթոդական ձեռնարկ, Ե., 2003, 58 էջ:
8. Հայոց լեզու և գրականություն, գիտամեթոդական ձեռնարկ, Ե., 2011, 72 էջ:
9. Մանուկյան Է., Կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման առանձնահատկություններն ու մանկավարժական պայմանները, Ե., 2013 թ.,, 124 էջ:
10. Յուզբաշյան Բ., Գորկին և գրականության մի քանի հարցեր, Ե., 1968 թ., 320 էջ:
11. Նանյան Լ., միջառարկայական կապերի իրականացումը տարրական դասարաններում որպես կրտսեր դպրոցականի գեղագիտական դաստիարակության օպտիմալավման միջոց, Ե., 2001 թ., 128 էջ:
12. Շահնազարյան Ա., Կոմիտաս, Ե., 2015 թ., 352 էջ:
13. Պետրոսյան Ա, Արշիլ Գորկի, Ե., 2004 թ., 131 էջ:
14. Սարգսյան Վ. Ա, Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ել, Մայրենի 1, Ե.,
15. Սարգսյան Վ. Ա, Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ել, Մայրենի 2, Ե.,
16. Սարգսյան Վ. Ա, Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ել, Մայրենի 3, Ե.,
17. Սաֆրազբեկյան Ի., Թումանյանի ընտանիքի կյանքի էջերից, Ե., 2009 թ. 262 էջ:
18. Սողոմոնյան Լ., Կրտսեր դպրոցականի գեղարվեստական կրթության իրականացումը մանկավարժական գործընթացում, Ե., 2010 թ., 124 էջ:
19. Վիրաբյան Ն., Մարտիրոս Սարյան, Ե., 2012 թ., 56 էջ:
20. Տեր-Գրիգորյան Ա., Միջառարկայական կապերը մայրենի լեզվի դասերին, Ե., 1986 թ., 128 էջ:
21. Քերոլ Լ., Ալիսան հրաշքների աշխարհում, Ե., 1998 թ., 250 էջ :

Համացանցային կայքեր

22. http//www. armtorrent.com:
23. http//www.grapaharan.org:
24. http//www.azatutyun.mobi: